«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման ՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը տեխնոլոգիա առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան ՝ Տեխնոլոգիա

Հետազոտող ուսուցիչ ՝ Արմինե Սուքիասյան

Ուսումնական հաստատություն ՝ հ 132 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…… …… 2

Թեմա 1. Դասի բովանդակային և ինտեգրվող թեմաներ …… 4

Թեմա 2. Ասեղնագործության մասին …… 4

Թեմա 3. Ինտեգրվող թեմա «Տնտեսական ընկերակցություններ» …… 5

Թեմա 4. Ներդասարանական ընկերակցության ստեղծում …….. 8

Թեմա 5. Աշխատատեղի կազմակերպում: Աշխատանքի պլանավորում … 9

Թեմա 6.Ձեռքի կարատեսակների կատարման տեխնիկան …….. 10

Թեմա 7. Էսքիզի փոխանցումը գործվածքի վրա: Ձարդակարերի

ընտրություն ……... 10

Թեմա 8. Հայկական ասեղնակարերի տեխնոլոգիան: Թելքաշ …… 11

Եզրակացություն …….. 12

Գրականություն ……. 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեխնոլոգիա առարկան աշակերտներին սովորեցնում է սեփական ձեռքերով առարկաներ և իրեր պատրաստել: Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը կօգնի նրանց հասկանալու՝ արդյոք այդ պատրաստած առարկան պիտանի է օգտագործման համար, արդյոք ունի պահանջարկ, կարողանա հետաքրքրել մարդկանց այն գնելու համար: Բաղադրիչը կօգնի նաև պարզել. թե այդ առարկայի պատրաստումով ինքը չի վնասում արդյոք շրջակա միջավայրը և բնությունը:

Ինտեգրելով ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը տեխնոլոգիա առարկայում կնպաստի, որ սովորողների մոտ զարգանան թե բիզնես գաղափարներ մտածելու և թե դրանք կյանքի կոչելու կարողություններ:

Ձեռնարկատիրական կրթությունը նպատակ ունի նապաստել, որ աշակերտը կարողանա հասկանալ և գնահատել իր պատրաստած առարկայի արժեքը որպես ապրանք: Պատրաստել այնպիսի մի բան, որը կհետաքրքրի և անհրաժեշտ կլինի մարդկանց, նրանց ցանկությունները կկարողանա բավարարել:

Ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը կնպաստի որպեսզի աշակերտները մտածեն ինքնուրույն, ստեղծագործաբար, լինեն նորարար, ինքնավստահ:

Պետք է նրանց մտածելակերպը զարգացնել այնքան, որ նրանք կարողանան կայացնել ինքնուրույն որոշումներ, լինեն նախաձեռնող, կարողանան աշխատել թիմային միավորումում, պլանավորել գործողությունները, ունենան առաջնորդին բնորոշ հատկանիշներ, սովորեն գումար աշխատել և սպառել նպատակային:

Աշխատանքի նպատակն է գործնականորեն կիրառել ձեռնարկատիրական կրթության փորձնական դասընթացը, ուսումնասիրել արդյունավետությունը հանրակրթական չափորոշիչում ընդգրկելու համար:

Օգտագործվել է նաև « Ձեռնարկատիրական կրթություն դասընթացի արդյունավետ գնահատում և սոցիալական Ձեռնարկատիրական առարկայի ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն » հետազոտական աշխատանքում , 2019թ հեղ. « Հայաստանի պատանեկան նվաճումներ » , ներառված ձեռնարկատիրության ինտեգրման դասերի արդյունքների ուսումնասիրության եզրակացությունները:

ԹԵՄԱ 1

Դասի բովանդակային և ինտեգրվող թեմաներ

Որպես ինտեգրվող թեմա իմ կողմից ընտրված է 7-րդ դասարանի « *Նյութերի գեղարվեստական մշակում»* 12 ժամ բովանդակային բաժնում՝ *«Տնտեսական ընկերակցություններ »* թեման: Բաժնում ըստ չափորոշիչ ծրագրի նախատեսված է «Ասեղնագործություն» արվեստի ուսուցանումը:

Թեման նախատեսում է տեսական մաս և գործնական աշխատանքներ:

Թեմայի նպատակն է.

- Հաղորդել տեղեկություններ ասեղնագործության մասին:
- Սովորեցնել ստեղծել պարզ նախշեր:
- Ընկերակցությունների կարևորությունը մարդկանց կյանքում, երկրի համար:

ԹԵՄԱ 2

Ասեղնագործության մասին 2 ժամ

Տեսական մասը բավականին ծավալուն է նպատակահարմար է ունենալ նմուշներ տարբեր տեսակի ասեղնագործություններից: Հատկապես պետք է մեկնաբանել, նկարագրել, հետաքրքրություն առաջացնել հայկական ասեղնագործության՝ ստեղծագործական պատմության մասին:

Ամենակարկառուն օրինակներից են Վանա կարը, Տարսոնի կարը, Երզրնկայի կարը, Մարաշի կարերը, թելքաշը:

Ժողովրդական ստեղծագործության ամենանուրբ ճյուղը ասեղնագործությունն է: Հայերը վաղ ժամանակներից ծանոթ են եղել հասարակ և բարդ ասեղակա-

րերի հետ: Դրանց շնորհիվ գործվածքը դառնում է զարդարանք: Հատկապես աչքի են ընկնում Մարաշի ասեղնագործ զարդարանքները, որոնք կարվում են երկու տարբեր տեսակի ասեղնակարերով: Մեկը յուրահատուկ հարթակար է, որ *կոթ ասեղ*, Զեյթունի կար անուններն է կրում, իսկ մյուսը՝ *հյուսված կար*, բնորոշ Մարաշի համար: Հյուսված կարը գաղտնակար է՝ որը դիտելով, նույնիսկ զննելով չի կարելի ընդօրինակել: Ասեղ-թելի անցնող ճանապարհը պետք է ճշգրիտ կատարվի և ոչ մի խախտում, ասեղի մի սխալ կուր՝ կխանգարվի զարդանկարի իրացումը:

Մարաշի հյուսված կարը հատուկ տեղ է գրավում ոչ միայն հայկական, այլ նաև ասեղնագործ արվեստի պատմության մեջ ընդհանրապես: Դրանք ժողովրդական ստեղծագործության բարձր ճաշակի և հմուտ վարպետության երաշխիք են, ասեղնագործ արվեստի գեղեցիկ, բարձրարժեք նմուշներ:

ԹԵՄԱ 3

Ինտեգրվող թեմա. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2 ժամ

Թեմայի հիմնական նպատակն է՝

Ձևավորել ընկերակցության էությունը, առավելությունները և թերությունները հասկանալու և դրանք ներկայացնելու կարողությունը:

Ակնկալվող գիտելիքներ՝

- Ընկերակցությունը մեկից ավելի սեփականատեր ունեցող առևտրային կազմակերպություն է:
- Ընկերակցությունը համատեղում է ֆիզիկական անձի և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկատիրական գործունեություն:

- Ընկերակցությունում սեփականատերները և ղեկավարները նույն անձինք են:
- Գործընկերները կարող են հավասար ներդրում կատարել գործի մեջ: Տվյալ դեպքում առևտրային կազմակերպության վերաբերյալ որոշումներ կայացնելիս նրանք ունեն խոսքի հավասար իրավունք: Շահույթը նույնպես հավասար է բաշխվում նրանց միջև:
- Գործընկերները կարող են ունենալ տարբեր չափաբաժիններով ներդրումներ: Այս դեպքում կազմակերպությանը վերաբերող որոշումները կայացվում են փոխադարձ հանաձայնությամբ:
- Ընկերակցության դեպքում գործընկերների միջև կարող են ծագել վեճեր և անհամաձայնություններ:
- Ընկերակցությունները ունեն որոշակի առավելություններ մյուս առևտրային կազմակերպությունների տեսակների, անհատ ձեռնարկատերերի և բաժնետիրական ընկերությունների համեմատ:
- Ընկերակցությունները ունեն նաև թերություններ մյուս առևտրային կազմակերպությունների տեսակների, անհատ ձեռնարկատերերի և բաժնետիրական ընկերությունների համեմատ:

Աշակերտը պետք է կարողանա.

- Բացատրել ինչ է իրենից ներկայացնում ընկերակցությունը:
- Ներկայացնել, որ ընկերակցությունը այնպիսի առևտրային կազմակերպություն է, որը համատեղում է և ֆիզիկական անձի, և իրավաբանական անձի կարգավիճակ:

- Նկարագրել՝ ինչպիսի առավելություններ ունի ընկերակցությունը:
- Նկարագրել ինչպիսի թերություններ ունի ընկերակցությունը:
- Իրական կյանքից բերել ընկերակցության օրինակներ:

Աշակերտը պետք կարևորի.

- Ընկերակցության դերը և կարևորությունները մարդկանց կյանքում:
- Ընկերակցության առանձնահատկությունները:
- Ընկերակցության առավելությունները:
- Ընկերակցության թերությունները:

Ընթացքը

Ընկերակցության առավելությունները

- Ընկերակցությունները հեշտ են հիմնվում: Ընկերակցության մասնակիցների միջև կնքվում է՝ պայմանագիր, որով սահմանվում է յուրաքանչյուր գործ-ընկերոջ ներդրումը /մասնաբաժին, փայ/ ձեռնարկության մեջ:
- Ընկերության մասնակիցները լրացուցիչ դրամ են ներդնում առևտրային կազմակերպության մեջ, որով մեծացնում են առևտրային կազմակերպության ընդլայնման հնարավորությունները:
- Դժվարությունների և անհաջողությունների դեպքում ընկերակցության մասնակիցները միմյանց հանդեպ ցուցաբերում են աջակցություն:
- Ընկերակցության մասնակիցները կարող են բերել նոր մտքեր, գաղափարներ, նոր հեռանկարներ:
- Ընկերակցության մասնակիցները որոշումներ կայացնելիս, պայմանագրեր կնքելիս աջակցում են միմյանց:

Ընկերակցության թերությունները

- Գործընկերներից յուրաքանչյուրի ուսերին են ծանրացած առևտրային կազմակերպության բոլոր պարտքերը և խնդիրները: Եթե առևտրային կազմակերպությունը անհաջողության մատնվի կամ սնանկանա, ապա պարտատերերը կարող են հետ ստանալ պարտքերը մեկ կամ բոլոր գործընկերներից, կամ նրանց գույքը օգտագործել:
- Ընկերակցությունում ներգրավված գումարը սահմանափակ է: Կախված է գործընկերների գույքի չափից և պարտք վերցնելու կարողությունից:
- Երբ Ընկերակցության մասնակիցներից մեկը լքում է գործը ընկերակցությունը իրավաբանորեն լուծարվում է: Կազմակերպությունը պահպանելու համար անհրաժեշտ է նոր պայմանագիր կնքել:
- Առևտրային կազմակերպության աշխատողների, չափերի, ռեսուրսների սահմանափակ լինելը:
- Շահույթը պատկանում է բոլոր գործընկերներին և բաժանվում է նրանց միջև:
- Ընկերակցության գործընկերների միջև կարող են առաջանալ հակասություններ, այն կարող է ազդել կառավարման որակի վրա կամ հանգեցնել կազմակերպության լուծարման:

ԹԵՄԱ 4

Ներդասարանական ընկերակցության ստեղծում 1ժամ

Թեման՝ Ընկերակցության մասին բավականին տեղեկություն ստանալուց հետո ստեղծել ներդասարանական ընկերակցություն և փորձել կյանքի կո-

չել, փորձարկել ինչպես կարող է գործել այն գործնականում:

Մինչ դասընթացի հիմնական թեմաներին անցումը դասարանի անդամների մոտ հետաքրքրություն է առաջանում ինտեգրվող թեմայի վերաբերյալ: Առաջարկվում է ստեղծել ընկերակցություն, որը կզբաղվի անձեռոցիկների ասեղնագործությամբ: Ինչպես կարգն է, թեման ուսումնասիրելուց հետո, որոշվում է աշակերտների պատասխանատվության աստիճանը աշխատանքի կազմակերպման և իրագործման հարցում: Կատարվում է համապատասխան գրառում:

Կարող են լինել մի քանի լիդերներ, որոնք կազմակերպում են ամբողջ գործընթացը, մասնակցում են նաև դասարանի բոլոր անդամները:

Որոշում են յուրաքանչյուրի ներդրման չափը: Մեկը պատասխանատվություն է վերցնում անձեռոցիկի ձեռք բերումը, մյուսը՝ թելերը, նաև ինչ որ մեկը աշխատանքային գործիքները: Այն անդամները, որոնք պասիվություն են ցուցաբերում համարվում են գործընկերության աշխատողներ:

ԹԵՄԱ 5

Աշխատատեղի կազմակերպում: Աշխատանքի պլանավորում 1 ժամ

Թեման՝ Ինչպես ճիշտ կազմակերպել աշխատատեղը: Պլանավորել կատարվելիք գործընթացը:

Բացատրել ինչ պայմաններ են անհրաժեշտ զերծ մնալու համար ավելորդ խանգարող հանգամանքներից: Աշխատատեղում ոչ մի ավելորդ իրի կամ ոչ ճիշտ պայմանների առկայություն չպետք է լինի: Աշխատատեղում լուսավորության աղբյուրը պետք է լինի ձախ կողմից:

Ասեղնագործելու համար պետք իմանալ օգտագործվող գործվածքների հատկությունները, ընտրել և նախապատրաստել անհրաժեշտ գործիքներ և հարմարանքներ: Ձեռքի ասեղնագործության համար կիրառվող թելերը, որակը, կառուցվածքը: Օգտագործվող ասեղների տեսակները, մատնոց, թելիչ, մկրատ, քարգահ, փափուկ մատիտներ:

Իմանալ գործողությունների հաջորդականությունը: Էսքիզի գործվածքի վրա տեղափոխելու տեխնիկան:

ԹԵՄԱ 6

Ձեռքի կարատեսակների կատարման տեխնիկան 2 ժամ

Թեման՝ Ի՞նչ կարատեսակներ են օգտագործվում ասեղնագործելիս: Կատարման տեխնիկան:

Ասեղնագործությունը իրականացվում է հատուկ տեխնիկական հնարքներով.

- Ասեղնագործելիս երբեք հանգույցներ չեն անում
- Ասեղը թելում են հատուկ տեխնիկայով

Կարևոր է սովորեցնել զարդակարերի կատարման տեխնիկան: Սովորեցնել առավել կիրառելի զարդակարերի կատարման տեխնիկային: Շարակար, դարձակար, ցողունակար, շղթայակար, օղակակար, պատկար, խաչկար, հարթակար:

ԹԵՄԱ 7

Էսքիզի փոխանցումը գործվածքի վրա: Զարդակարերի ընտրություն: 2 ժամ

Թեման՝ Էսքիզի փոխանցում: Զարդակարերի ընտրություն:

Քանի որ աշխատելու համար նախատեսված դասաժամերը քիչ են, աշա-

կերտներին կատարման տեխնիկայի հետ ծանոթացնելուց հետո հանձնարվում է աշխատանքը շարունակել տանը, որը նրանք կատարում են մեծ սիրով: Էսքիզի փոխանցման համար ընտրել հարմար գնդասեղներ և փափուկ մատիտ:

Աշխատանքի ամբողջ ընթացքում հետևում են գործընկերության կատարած աշխատանքի ընթացքին՝ ղեկավարմանը, հավասար պատասխանատվությանը թերացումների ժամանակ: Վիճելի հարցերի ժամանակ ճիշտ լուծումներ տալուն:

Կատարվում է ասեղնագործ իրերի որակի ստուգում,խոնավաջեմամշակում:

ԹԵՄԱ 8

Հայկական ասեղնակարերի տեխնոլոգիան: Թելքաշ: 2 ժամ

Թեման՝ Թելքաշ ասեղնագորշության կատարման տեխնոլոգիան:

Ընտրել այնպիսի գործվածք, որի թելերը հեշտ է հաշվել-հանել: Թելքաշ ասեղնագործությամբ կարելի է ձևավորել սփռոցներ, անձեռոցիկներ, հագուստը: Գոյություն ունեն թելքաշի տարբեր տեսակներ՝ սյուներ, կամրջակներ, խաչեր: Ցույց տալ ինչպես են հեռացվում թելերը: Ինչպես խմբավորել սյուները: Պետք է իմանալ նաև, որ գոյություն ունեն ասեղնագործության մեքենայացում և ավտոմատացում, որի համար օգտագործում են էլեկտրոնային հիշողությամբ օժտված և ծրագրավորվող մեքենաներ:

Եզրակացություն

Դասընթացի արդյունքները քննարկվեցին այն բանից հետո, երբ իրականացավ կատարած անձեռոցիկների ցուցահանդես վաճառք: Աշակերտները ստացան եկամուտ: Անցկացվեց բանավեճ կատարած աշխատանքների առավելությունների և թերությունների մասին:

Ստացանք հետևյալ եզրահանգումը

- Մատուցվող նյութը հեշտությամբ է յուրացվում, երբ այն կիրառվում է գործնականում:
- Աշակերտների մոտ առաջանում է ձեռնարկատիրությունը առավել մանրամասն ուսումնասիրելու ցանկություն:
- Աշակերտները դրական են մոտենում «Ձեռնարկատիրական կրթություն» դասընթացին: Համարում են այն օգտակար՝ հետագայում կիրառելու ցանկությամբ:
- Առաջարկություն եղավ դասընթացը ուսումնասիրելու համար շատ դասաժամեր հատկացնել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տեխնոլոգիա : Հանրակրթական դպրոցի 7 - րդ դասարանի դասագիրք / Սողոմոնյան Կ.-Եր. « Աստղիկ Գրատուն » հրատ. էջ 96
2. « Տեխնոլոգիա » առարկայի չափորոշիչն ծրագիր, Երևան 1-7-րդ դասարան – ներ , Երևան , 2012
3. Տեխնոլոգիա / ուսուցչի ձեռնարկ / 5-7-րդ դասարաններ / Ս.Հովսեփյան , Ա.Հարությունյան , Մ.Աղաջանյան , Լ.Վերդյան / Եր. Տիգրան Մեծ 2014 թ. էջ 92
4. Ս.Դավթյան ,Մարաշի ասեղնագործություն , Երևան « Սովետական Գրող» 1978 թ. էջ 5-7
5. Պապիկյան Կ. , Հայկական ասեղնագործություն , Երևան , « Զանգակ-97 » 2002թ
6. Հովհաննիսյան Ա. և ուրիշներ , « Տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթություն » չափորոշիչ , ծրագիր , ուսուցչի ձեռնարկ , 6-րդ դասարան , Եր. , Տիգրան Մեծ , 2020թ. էջ 71- 77
7. Հովհաննիսյան Ա. և ուրիշներ , « Տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթություն » չափորոշիչ , ծրագիր , ուսուցչի ձեռնարկ , 2-րդ դասարան, Եր. , Տիգրան Մեծ , 2017 թ. էջ 3
8. « Ձեռնարկատիրական կրթություն դասընթացի արդյունավետության գնահատում և սոցիալական ձեռնարկատիրություն առարկայի ներդրման հնարավորությունների ուսումնասիրություն հետազոտական աշխատանք 2019թ. էջ 45